ՏԵՂԵԿԱՆՔ

«ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ

Հոդված 1. «Զանգվածային լրատվության մասին» 2003 թվականի դեկտեմբերի 13-ի ՀՕ-14-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածը.

1.լրացնել նոր 5-րդ կետով հետևյալ խմբագրությամբ.

«5) չնույնականացվող աղբյուր՝ համացանցում գրանցված դոմեյն, հոսթինգ ունեցող կայք կամ համացանցային կայքի կամ հավելվածի օգտահաշիվ կամ ալիք կամ էջ (այսուհետ՝ աղբյուր), որի տնօրինողի նույնականացման տվյալները ~~թաքցված են ընթերցողից~~ բացակայում են կամ ակնհայտ կեղծ են կամ թերի են, եթե այդ թերությունը թույլ չի տալիս նույնականացնել աղբյուրը տնօրինողին:Տնօրինողի նույնականացման տվյալներն են աղբյուրը տնօրինող ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության կամ հաշվառման վայրը, եթե նա լրատվական գործունեությունն իրականացնում է որպես անհատ ձեռնարկատեր, ապա նաև պետական հաշվառման համարը, իսկ եթե աղբյուրը տնօրինվում է իրավաբանական անձի կողմից՝ իրավաբանական անձի լրիվ անվանումը, կազմակերպական-իրավական ձևը, գրանցման համարը:»:

2. 2-րդ կետի 4-րդ ենթակետում «1-ին և 2-րդ կետերում» բառերը փոխարինել «4-րդ ~~կետ~~մասում» բառերով, ~~իսկ~~ «սեփական կամ վարձակալած» բառերը փոխարինել «գրանցված» բառով, իսկ «տեղեկությունները» բառը փոխարինել «տվյալները» բառով:

Հոդված 2. Օրենքի 6-րդ հոդվածում.

1.1-ին մասը լրացնել՝ նոր 2-րդ պարբերությամբ.

«Լրատվական գործունեություն իրականացնող~~ն~~ի, ~~իր լրագրողին պետական մարմիններում հավատարմագրելու համար չի կարող դիմել~~, լրագրողի հավատարմագրումը պետական մարմիններում ենթակա է մերժման, եթե այն չի կատարել սույն օրենքի 11-րդ հոդվածով կամ 12-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված պահանջները: Մերժման այլ հիմքերը կարող են սահմանվել համապատասխան պետական մարմնում լրագրողների հավատարմագրման կարգով:»:

~~2. 5-րդ մասում «դիմումով» բառից հետո լրացնել՝ «կամ լրատվական գործունեություն իրականացնողի՝ հավատարմագրված լրագրողի հետ իրավահարաբերությունների դադարեցման մասին դիմումով» բառերով:~~

~~3. Լրացնել՝ նոր 5.1 և 5.2 մասերով հետևյալ խմբագրությամբ.~~

~~«5.1. Լրագրողի հավատարմագրումը կարող է դադարեցվել, եթե չեն պահպանվել այդ մարմինների աշխատակարգի կանոնները:~~

~~5.2. Լրատվական գործունեություն իրականացնողը իր անունից հավատարմագրված լրագրողի հետ իրավահարաբերությունների դադարեցման դեպքում պարտավոր է այդ մասին հնգօրյա ժամկետում գրավոր ընթացակարգով տեղեկացնել բոլոր այն պետական մարմիններին, որտեղ հավատարմագրված է տվյալ լրագրողը:»:~~

~~**Հոդված 3.** Օրենքի 7-րդ հոդվածը լրացնել նոր 4-րդ մասով հետևյալ խմբագրությամբ.~~

~~«4. Արգելվում է հղում կատարել այն աղբյուրներին, որոնք չեն համապատասխանում սույն օրենքի 11-րդ հոդվածի պահանջներին կամ չնույնականացվող աղբյուրներին, բացառությամբ սույն օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի:»:~~

Հոդված ~~4.~~3. Օրենքի 9-րդ հոդվածը 2-րդ մասի 3-րդ կետում՝
1) «~~հրապարակային~~ ելույթի» բառերից հետո լրացնել «~~կամ գրառման~~հրապարակման» բառերով.
2) լրացնել 2-րդ նախադասությամբ՝ հետևյալ խմբագրությամբ.

«Սույն կետով նախատեսված դեպքում լրատվական գործունեություն իրականացնողը չի ազատվում տեղեկատվության տարածման համար պատասխանատվությունից, եթե այն չնույնականացվող աղբյուրի տարածած տեղեկատվության վերարտադրությունն է՝ անկախ այդ չնույնականացվող աղբյուրին հղում կատարելու հանգամանքից:»:

Հոդված ~~5~~4. Օրենքի 11-րդ հոդվածում՝

1. վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 11. Զանգվածային լրատվության միջոցի տվյալները ներկայացնելը**»:

2. Օրենքի 11-րդ հոդվածը լրացնել նոր 4-րդ մասով հետևյալ խմբագրությամբ.

«4.Համացանցում գրանցված դոմեյն, հոսթինգ ունեցող զանգվածային լրատվության միջոցը իր կայքում պետք է ներառի՝

1) լրատվության միջոցի անվանումը.

2) լրատվական գործունեություն իրականացնող իրավաբանական անձի լրիվ անվանումը, կազմակերպական-իրավական ձևը, ~~գտնվելու վայրը~~ գրանցման համարը, իսկ եթե լրատվական գործունեություն իրականացնողը ֆիզիկական անձ է, ապա նրա անունը, ազգանունը, ~~գտնվելու վայրը~~ բնակության կամ հաշվառման հասցեն, եթե նա անհատ ձեռնարկատեր է, ապա նաև պետական հաշվառման համարը ~~և տրման օրը.~~

~~3) հետադարձ կապը (հեռախոսահամարը և էլեկտրոնային հասցեն)»:~~

Հոդված 6. Օրենքի 12-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Զանգվածային լրատվության միջոցի եկամուտները գոյանում են գովազդից, այլ վճարովի եթերաժամից, սեփական արտադրության տպագիր պարբերականի, տեսաշարային, ձայնաշարային և տեսաձայնաշարային նյութերի վաճառքից, բաժանորդային ~~վճարումներից, հովանավորությունից, փոխառությունից, իրական շահառու հանդիսացող անձի կամ անձանց ներդրումներից:~~ մուծումներից, հիմնադիրների ներդրումներից և օրենքով չարգելված այլ աղբյուրներից ստացված ֆինանսական միջոցներից:

2. Լրատվական գործունեություն իրականացնողը, մինչև ընթացիկ տարվա մարտի ~~երեսունմեկ~~31-ը ներառյալ, պարտավոր է նյութական կրիչի վրա թողարկված լրատվության միջոցի հերթական թողարկման մեջ (եթե դա թողարկվում է), իսկ համացանցում գրանցված դոմեյն, հոսթինգ ունեցող կայքի գլխավոր էջում «Տարեկան հաշվետվություն» վերնագրի ներքո հրապարակել նախորդ տարվա ֆինանսական հաշվետվությունը՝ ~~տեղեկատվություն տարեկան եկամուտների մասին՝~~ ըստ սույն հոդվածի 1-ին մասում նշված եկամուտների աղբյուրների:»:

Հոդված 7. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում ~~պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:~~ 2022 թվականի հունվարի 1-ից: